«Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում « Երևանի թիվ 1 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ

(հունվար-հունիս 2026թ.)

**1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ, ԿՁԱՊԿ) գնահատում**

Հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորված գնահատումների թիվը եղել է՝ 55 դպրոցի գնահատում, 58 ՆՈՒՀ-ի գնահատում,2 ՄԿՈՒ-ի գնահատում: Սակայն իրականացվել է 104 դպրոցի գնահատում՝ 74 տղա, 30 աղջիկ, Նուհ-ում իրականացվել է110 սանի գնահատում՝ 85 տղա,25 աղջիկ, ՄԿՈՒ-ում իրականացվել է 17 գնահատում՝ 4 աղջիկ, 13 տղա:

| | |
|---|---|
| 0-6 տարեկան | 110 սան |
| 6-18 տարեկան | 104 սովորող |
| 16-19+ | 17 ուսանող |

**0-6** տարեկան երեխաների կրթական կարիքի գնահատման արդյունքում կարիք է ճանաչվել թվով **106** սանի մոտ, **4 սանի մոտ կարիք չի ճանաչվել, 15** սանի գնահատման գործընթաց ընթացքի մեջ է:

**6-18** տարեկան երեխաների կրթական կարիքի գնահատման արդյունքում կարիք է ճանաչվել թվով **104** սովորողի մոտ, **1** երեխայի մոտ կարիք չի ճանաչվել:

**16-19+** տարեկան 17 ուսանողների կրթական կարիքի գնահատման գործընթացը ընթացքի մեջ:

**2. Մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցում**

Հաշվետու ժամանակահատվածում ՄՀ աջակցության ծառայություն է տրամադրվել և՛ դպրոցի, և՛ ՏՄԱԿ-ի կողմից (լոգոպեդի, հատուկ մանկավարժի, հոգեբանի, ֆիզիո թերապիստի) 931 աշակերտի՝ 675 տղա, 256

աղջիկ:

10 աշակերտի աջակցություն է տրամադրվել տնային ուսուցման պայմաններում,1 աշակերտի աջակցություն է տրամադրվել ՏՄԱԿ-ում::

ՆՈՒՀ-ում աջակցություն է տրամադրվել և՛ ՏՄԱԿ-ի, և՛ ՆՈՒՀի կողմից 224 սանի՝ 194 տղա, 30 աղջիկ:

ՄԿՈՒ-ում հաշվետու ժամանակահատվածում իրականացվում է գնահատման

գործընթաց այդ իսկ պատճառով աջակցություն դեռևս չի տրամադրվում:

### 3. Կարողությունների զարգացում/ վերապատրաստումներ

Հաշվետու ժամանակահատվածում «Վերապատրաստումների և մեթոդական աջակցության» բաժնի կողմից պլանավորվել և իրականացվել է թվով **33** վերապատրաստում դպրոցում, **17** վերապատրաստում ՆՈՒՀ-ում, թվով 2 վերապատրաստում ՄԿՈՒ-ում:
Վերապատրաստումների թեմաներն ընտրվել են ըստ հայտի, անհրաժեշտության և նախատեսված պլանային: Ինչպես նաև վերապատրաստումներ են իրականացվել մշտադիտարկումների արդյունքում վեր հանված դժվարությունների վերաբերյալ: Նաև տվյալ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել և իրականացվելու է արտահերթ պարտադիր սեմինար վերապատրաստում՝ «Բռնության ճանաչումը և կանխարգելումը դպրոցում»թեմայով:
Վերապատրաստումներն միտված են մասնագետների և մանկավարժների մասնագիտական կարողությունների բարձրացման, իրազեկման, աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպմանն ուղղված:

| ՀՀ | Վերապատրաստման թեմա | Վերապատրաստման մասնակից անձանց թիվ |
|---|---|---|
| 1 | *Աուտիզմ- ՆՈՒՀ* | 7 |
| 2 | *Կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ ԱՈՒՇԳ* | |
| 3 | *Կրթության աջակցող միջոցներ.Մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ* | 194 |
| 4 | *Օգնիր օգնողին* | 48 |
| 5 | *ԱՈՒԳ* | 34 |
| 6 | Կրթության աջակցող միջոցներ.Մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ | 566 |

4. Խորհրդատվություն

Հաշվետու ժամանակահատվածում դպրոցներում պլանավորված **170** 136-ը, ՄԿՈՒ-ներում **3-ից՝ 4-ը**: Պլանավորված անձանց թիվը՝

1. Դպրոցում **1920** - մասնակցություն են ցուցաբերել 1156 **անձ**
2. ՆՈՒՀ-ում **586** - մասնակցություն են ցուցաբերել **481** անձ
3. ՄԿՈՒ-ում **918** - մասնակցություն են ցուցաբերել **17** անձ

Խորհրդատվություններն իրականացվել են հետևյալ թեմաներով՝

**ՆՈՒՀ-ում**

- ԱՈՒՁՊ -ի լրացման և վարման կարգ
- Գնահատման գործընթացի իրականացման վերաբերյալ
- Տարեկան և կարճաժամկետ նպատակների սահմանման վերաբերյալ
- Թղթապանակների վարման կարգի վերաբերյալ
- ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրման վերաբերյալ
- Ուսումնական գործընթացի և միջավայրային հարմարեցումների վերաբերյալ
- Ծնող-դաստիարակ ՆՈՒՀ համագործակցություն

**Դպրոցում**

- Աուպ-ի վարման և լրացման կարգ
- Տարեկան և կարճաժամկետ նպատակների սահմանման վերաբերյալ
- Ուսումնական գործընթացի և միջավայրային հարմարեցումների վերաբերյալ
- ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրման վերաբերյալ
- Ծնող-ուսուցիչ-դպրոց համագործակցություն
- ԿԱՊԿ գնահատման գործընթացի իրականացման վերաբերյալ

**ՄԿՈՒ-ում**

- ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրման վերաբերյալ
- Գնահատման գործընթացի իրականացման վերաբերյալ
- Թղթապանակների վարման վերաբերյալ

Իրականացվող խորհրդատվությունները ուղղված են ԿԱՊԿ և ԿԶԱՊԿ երեխաների դուրս բերման և ուսումնական գործընթացում ներգրավման, համագործակցության, միջավայրային և ուսումնական հարմարությունների արդյունավետությանը:

5. Մշտադիտարկում

Հաշվետու ժամանակահատվածում դպրոցներում պլանավորված 79 մշտադիտարկումից իրականացվել է թվով 79 մշտադիտարկում, ՆՈՒՀ-երում՝ պլանավորված 36-ից իրականացվել է 35-ը, ՄԿՈՒ-ներում 3-ից՝ 3-ը::

Մշտադիտարկումները իրականացվել են ՏՄԱԿ-ի սպասարկման դպրոցներում և ՆՈՒՀ-երում, ՄԿՈՒ-երում հետևյալ թեմաներով՝

- ***ԿԱՊԿ գնահատման գործընթացի մշտադիտարկում***
- ***Ուսումնական գործընթացի և միջավայրային հարմարեցումներ***
- ***Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մշտադիտարկում***
- ***Ծնող-ուսուցիչ-դպրոց համագործակցությունը***

Խնդիրները հիմնականում տեխնիկական և համընդհանուր են՝

ԱՈՒՊ / ԱՈՒԶՊ- վարման և լրացման կարգի վերբերյալ

- ՄՅ աջակցության տրամադրման
- Համագործակցություն
- Ուսումնական գործընթացի և միջավայրային հարմարեցումների թերի կազմակերպում

Կենտրոնի անվանումը՝ «Երևանի թիվ 1 Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն » ՊՈԱԿ

Տնօրեն՝ (ստորագրություն) Քրիստինե Ցնդոյան (անուն, ազգանուն)

Կ.Տ.

01 հուլիս 2026թ